ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊԱՐՈՆ Ս.ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Հավասար հնարավորությունների ապահովման վարչության տարեցների հիմնահարցերի բաժնի փորձագետ Անահիտ Գևորգյանի կողմից 17.06.2024թ. մինչև 17.09.2024թ.կատարված աշխատանքների վերաբերյալ

Հաշվետու ժամանակահատվածում կատարել եմ Պայմանագրով նախատեսված հետևյալ աշխատանքները.

1.Իրավական ակտերի նախագծերի մշակում, կամ դրանց մշակման աշխատանքներին մասնակցություն

1) «Սոցիալական ծառայություններ տրամադրող կազմակերպությունների գործունեության հավաստագրման կարգը և պայմանները հաստատելու և Հայաստանի Հանրապետությանկառավարության 2015 թվականի սեպտեմբերի 10-ի N 1078-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» կառավարության որոշման նախագիծ (դրվել է շրջանառության մեջ)
2) «Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության համակարգի շուրջօրյա մասնագիտացված խնամքի կենտրոններում շահառուների նկատմամբ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման ընթացակարգի» նախագիծ (դրվել է շրջանառության մեջ):

2. Պաշտոնական գրություններ պատրաստում այլ պետական մարմիններ և այլ գերատեսչություններից ստացված գրություններին պատասխանում կամ նրանց մշակած իրավական ակտերի վերաբերյալ կարծիքների ներկայացում

1) Գրություններ այլ կազմակերպություններ – 15,
2) Այլ պետական մարմինների մշակած իրավական ակտերի վերաբերյալ կարծիքների ներկայացում – 17,

3) Այլ պետական մարմիններից և կազմակերպություններից ստացված հարցումների պատասխանում՝ 13:
Այդ թվում, նաև՝
4) Պատրաստել եմ տեղեկանք Խոշտանգումների կանխարգելման կոմիտեի՝ նախարարության ենթակայության խնամքի հաստատություններում իրականացրած մշտադիտարկման արդյունքում ներկայացրած դիտողությունների և առաջարկությունների վերաբերյալ, ներկայացնելով նախարարության դիրքորոշումն ու պարզաբանումները ցեկույցի վերաբերյալ
5) Ամփոփել և կազմել եմ տեղեկանք 2024 թ. ընթացքում մասնագիտական վերապատրաստումների դասընթացների թեմաների վերաբերյալ նախարարության ենթակայության ՊՈԱԿ-ների կողմից ներկայացված առաջարկությունների վերաբերյալ.
6) Ի կատարումն Տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի նիստի քննարկումների արդյունքում տրված հանձնարարականների, պատրաստել եմ գրություններ ՀՀ առողջապահության նախարարություն և ՄԻՊ գրասենյակ՝ ԱՍՀ նախարարությանն աջակցելու մասնագիտացված խնամքի հաստատություններում խնամվող հոգեկան առողջության խնդիրներ ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման վերաբերյալ ուղեցույցեր և ընթացակարգեր մշակելու, ինչպես նաև խնդրի լուծման հետ կապված անհրաժեշտ տեղեկատվություն տրամադրելու և հաստատությունների բուժանձնակազմի համար վերապատրաստման դասընթացներ կազմակերպելու խնդրանքով:
3.Քննարկումների մասնակցություն
1)ՀՀ արդարադատության նախարարությունում մասնակցել եմ հոգեբուժական հաստատություններում և տուն-ինտերնատներում խոշտանգումների, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի մասին անանուն հաղորդումներ ներկայացնելու միջոցներ, ինչպես նաև արձանագրելու ձևաթուղթ և ուղեցույց սահմանելու և իրավապահ մարմիններին ներկայացնելու հստակ ընթացակարգ մշակելու վերաբերյալ քննարկմանը.
2)Մասնակցել եմ ՄԻՊ աշխատակազմի կողմից կազմակերպված «Խոշտանգումների և անմարդկային վերաբերմունքի կանխարգելումը»խորագրով սեմինար-վերապատրաստմանը.
3)Մասնակցել եմ Տարեցների հիմնախնդիրներով զբաղվող միջգերատեսչական հանձնաժողովի նիստին, որը նվիրված էր հոգեկան առողջության խնդիրներ

ունեցող անձանց նկատմամբ ֆիզիկական զսպման, մեկուսացման միջոցների և հանդարտեցման մեթոդների կիրառման հարցերին, մասնավորապես նախարարության ենթակայությամբ գործող մասնագիտացված խնամքի շուրջօրյա հաստատություններում: Կազմել եմ նիստի արձանագրությունը, ուղարկել Հանձնաժողովի բոլոր անդամներին.

4)Մասնակցել եմ նախարարի տեղակալի մոտ կայացած քննարկմանը, որի արդյունքում, հիմք ընդունելով քննարկման ժամանակ արված առաջարկությունները, մեկ անգամ ևս լրամշակել նախագիծը.

5)Մասնակցել եմ մեր վարչության և «Միջազգային ժողովրդավարություն» միջազգային կազմակերպության ներկայացուցիչների հանդիպում-քննարկմանը, որտեղ քննարկվել են նախարարության և կազմակերպության միջև համագործակցության հարցեր:

4.Պատասխանել եմ քաղաքացիներից ստացված 14 դիմումի, տվել համապատասխան պարզաբանումներ:

Հավասար հնարավորությունների ապահովման
վարչության տարեցների հիմնահարցերի
բաժնի փորձագետ՝ Անահիտ Գևորգյան

16.09.24թ.